

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ս.ԵՐՐՈՐՊՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ.ԱՌԱՔ.

ԵԿԵՂԵՑՒՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ -ԹՈՐՈՆԹՕ

29 ՅՈՒՆՈՒԱՐ 1978

- : Ս.Երրորդութիւն Հայց.Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը զուամարուեցաւ Կիրակի 29 Յունուար 1978 Կ.Ե. ժամը 2:30-ին եկեղեցւոյ սրահին մէջ:
- 1- Ժողովի բացումը կատարեց Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Տ.Արիս Եպիսկ. Եիրվանեանը, աղօթքով:
 - 2- Պատուարժան. ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Մինաս Սէլեան, ըստ Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի կանոնադրութեան թիւ 17 յօդուածին օրինական յայտարարեց ժողովը.- ներկաներու թիւն էր 95 ինիսուն եւ հինգ:
 - 3- Պատուարժան. ծխական Խորհուրդի Ատենապետի Կրաւէրով ձեռնարկուեցաւ օրուան դիւանի ընտրութեան:
Ընտրողական յանձնախումբի ներկայացուցած թեկնածուներու շուրջ ձեռամբարձ քուէարկութեամբ, դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով:-
Ատենապետ՝ Տիար Կարօ Գալուքեան, Ատենաղապիրներ՝ Տեարք՝ Մատթ Բ.Մամուրեան եւ Թորգոմ Զապուէնեան:
Ցանուն. օրուան դիւանին Պրն.Կարօ Գալուքեան շնորհակալութիւն յայտնեց ներկայ անդամներուն իրեն հանդէպ ցոյց տրուած վստահութեան եւ խօստացաւ Եկեղեցւոյ կանոնադրութեան, ընդունուած ժողովական սկզբունքներուն համաձայն, եւ անկողմնակցութեամբ վարել ժողովը յօգուած համայնքիս գործերուն: Ապա Տիար Կարդան Կարդանեան առաջարկեց ընդունիլ օրուայ օրակարգը որը յետ ձեռամբարձ քուէարկութեան նոյնութեամբ որդեգրուեցաւ:
 - 4- 1977 տարեշրջանի անդամական ընդհանուր ժողովի ատենադրութիւնը կարդացուեցաւ նախորդ շրջանի դիւանի ատենաղապիրներէն Պրն.Հրաչ Շիշմանեանի կողմէ.- ընթերցումէն յետոյ տեղի ունեցաւ հետեւեալ Մշտումը:
Տեղեկագրին 12-րդ յօդուածին վերջին պարբերութեան մէջ աւելցնել Պրն.Հայկ Սէլեանի անունը որ մոռցուած էր. այնուհետեւ վաւերացուեցաւ նախորդ շրջանի ատենադրութիւնը:
 - 5- Օրուայ ատենապետը, Կրաւիրեց սրբազան հայրը որ կատարէ իր միամեայ հովուական տեղեկագրի ընթերցումը ներառեալ Առաջնորդական Փոխանորդի գործունէութիւն:
Սրբազան Հօր տեղեկագրի ընթերցումէն յետոյ Պրն.Ատենապետը Կրաւիրեց ժողովականները որ արտայայտուին սոյն տեղեկագրին մասին:
 - 1- Խօսք առնելով Պրն.Կարդան Կարդանեան հարց տուաւ թէ, ինչո՞ւ համար Սրբազան հայրը Օթավայի մէջ ծխական մը հիմնելու ձեռնարկած է երբ Առաջնորդ Սրբազան հայրը նամակով մը յայտնած է թէ այդ շրջանի ծխականի կազմութիւնը կ'իյնայ իրաւասութեանը մէջ Մոնթրէալի հովիւին:
 - Ի պատասխան սոյն հարցումին Սրբազան հայրը ըսաւ թէ, իր Առաջնորդութեան

Փոխանորդութեան իրաւասութեան մէջ է ըստ կանոնագրի այդպիսի հարցերով զբաղիլը:

2- Պրն. Պետրոս Գոգորեան հարց տուաւ թէ Գանատական Թեմի կազմութեան ծրագրի յանձնախումբի անդամներուն անունները չեն յիշուած:

- Սրբազան հայրը պատասխանեց ըսելով թէ յանձնախումբ մը կազմուած էր ժամանակին հետեւեալ անձերէ. - Հոգ. Տ. Շնորհա ծ. Վրդ. Գասպարեան-Մոնթրէալ- Սեդրակ Ատուրեան - Թորոնթօ- Գրիգոր Տէր Գրիգորեան - Ս. Գաթրինգ- ստեղծուեցաւ նաեւ տեղւոյս մէջ օժանդակ յանձնախումբ մը աւելի յաճախակի հանդիպումներով դիւրացնել Գանատական Առաջնորդութեան կազմութեան ծրագրի աշխատանքը քաղկացած հետեւեալներէ՝ Պրն. Պարգեւ Խոճաճեան, Պրն. Հայկ Սէլեան եւ Փաստաբան Պերմ Փափագեան.

յետ տրուած բացատրութեանց ժողովը վաւերացուց Սրբազան հօր տեղեկագիրը:

6- Պրն. Պարգեւ Խոճաճեան կարդաց Թեմականի պատգամաւորական տեղեկագիրը:

1- Պրն. ~~Պարգեւ~~ Մարգարեան հարցուց թէ որոնք էին Թորոնթօի պատգամաւորները.

- Պատասխանուեցաւ թէ մասնակցող պատգամաւորները հետեւեալներն էին. -

Պրն. Պարգեւ Խոճաճեան եւ Պրն. Հրանդ Սուլին. իսկ ի պաշտօնէ ներկայ ծիսականի ատենապետ Պրն. Մինաս Սէլեան.

Ընթերցումէն ետք, օրուայ ատենապետը դիտել տուաւ թէ, փոփոխութեան ենթակուած առաջարկին, առաջին պարբերութեան մէջ պէտք է աւելցնել ' 'հաշուեքննիչ' ' քառը:

Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց պատգամաւորներու տեղեկագիրը:

7- Յանուն ծիսական Խորհուրդի Ատենադպիր Պրն. Կարօ Խապայեան կարդաց ծիսական Խորհուրդի Տարեկան միամեայ զործունէութեան տեղեկագիրը:

Եղան կարգ մը հարցումներ ժողովականներու կողմէ. -

1.- Պրն. Վարդան Վարդանեան, հարց տուաւ թէ Ողբ. Պօղոս Սվաճեանի կտակի առնչութեամբ ծիսական Խորհուրդը ինչ աշխատանք տարած է:

- Ծիսականի ատենապետ Պրն. Մինաս Սէլեան պատասխանեց ըսելով թէ այս հարցին բարձր կարգադրութեան համար դիմած ենք փաստաբանի, պէտք եղած աշխատանքը կը տարուի անմիջապէս որ նոր տեղեկութիւններ ունենանք կը տեղեկացնենք ժողովին:

2- Պրն. Մատթ 3. Մամուրեան յիշեցուց թէ եկեղեցւոյ փոփոխութեան հարցին առնչութեամբ կարդացուած տեղեկագրին մէջ մոռցուած է յիշել նաեւ Հ. Բ. Ը. Մ. կողքին Ռ. Ա. Կ. եւ Թէքէեան կազմակերպութեանց անունները, որոնք, իրենք ալ ծիսականի հետ հանդիպումի ընթացքին, քաջալերած էին ծիսականի մտածումը եւ խօստացած էին քարոյսապէս ու նաեւ նիւթապէս զօրավիզ կանգնիլ սոյն զործին յաջողելուն համար:

Պրն. Մինաս Սէլեան, ծիսական Խորհուրդի ատենապետը, ընդունեց եղած ակնարկութիւնը եւ համամիտ եղաւ աւելցնել նաեւ սոյն կազմակերպութեանց անունները իբր քաջալերողներ եկեղեցւոյս ծրագրին:

3- Տօքթ. Այնաճեան ըսաւ թէ հեռաձայնային տետրակը լման հայուիթեան ցանկը չէ, եւ պատրաստակամութիւն յայտնեց իր գործակցութիւնը բերելու աւելի կատարեալ գրգոյկի մը հրատարակութեան համար յառաջիկային:

- Պրն. Մինաս Սէլեան պատասխանելով ըսաւ թէ, նամակներ ուղարկած ենք զանազան կազմակերպութիւններու եւ անհատներու, ունենալու համար որքան որ կարելի է ամբողջական անուններ պարունակող գրքոյկ մը. եթէ թերութիւններ կան կը յուսանք յառաջիկայ տարի կարելի կ'ըլլայ ամբողջացնել պակաս անունները:

4- Պրն. Վարդան Վարդանեան կարդաց ծխական Խորհուրդի տեղեկագրութեան 20-րդ յօդուածին մէջ Գայանէ պարախումբի առնչութեամբ գրուած հետեւեալ նախադասութիւնը ' ' . . . Դիմեցինք մշակութային կապի ընկերակցութեան ' ' հարց տուաւ թէ յստակ չէ այդ.

- Պրն. Մինաս Սէլեան տուաւ անհրաժեշտ բացատրութիւնը:

5- Պրն. Ժիրայր Հանրմեան հարց տուաւ թէ, ինչ աշխատանք տարուած է այս տարուայ Գարաւանի համար:

- Պրն. Հրաչ Պօյաճեան պատասխանելով ըսաւ թէ, դիմած ենք գարաւանի յանձնախումբին եւ պատասխան կը սպասենք, եւ կը յուսանք թէ պատասխանը դրական ըլլայ: Եւ ապա միաձայնութեամբ վաւերացուեցաւ սոյն տեղեկագիրը:

Յարակից մարմիններու տարեկան միամեայ գործունէութեան տեղեկագիրները , որուն ժողովականները գնահատանք յայտնեցին, ինչպէս նաեւ ըրին կարգ մը օգտակար թելադրութիւններ, եւ միաձայնութեամբ վաւերացուեցան տեղեկագիրները: Իսկ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ամսաթերթի տեղեկագրին մէջ առաջարկուած էր հետեւեալը. - ' ' Եկեղեցւոյ անդամներուն տարեվճարը 5 Տոլար, այլ բաժանորդներուն 10 Տոլար: Գաղափարի փոխանակութիւններէ ետք ժողովս ձեռամբարձ բուլետնութեամբ 34 դրական եւ 11 ժխտական արդիւնքով վաւերացուց նոյնութեամբ:

Հ.Ն.Ն.Կ.Ա.ի վարչութեան տեղեկագրութեան չգոյութեան պատճառաւ, հրաւիրուեցաւ նախորդ տարուայ ծխական Խորհուրդի Ընդհանուր Անդամական ժողովէն նշանակուած Հ.Ն.Ն.Կ.Ա.ի ծնողական յանձնախումբի ատենապետ Պրն. Վարդան Վարդանեան, որ կարդաց իրենց տեղեկագիրները. եւ ապա յանձնեց դիւանին:

8- Կարդացուեցաւ ելեւմտական հաշուետուութիւնը, ինչպէս նաեւ 1978 տարւոյ ելեւմտացոյցը եւ կարգ մը տպագրական ճշդումներէ եւ թելադրութիւններէ վերջ վաւերացուեցաւ միաձայնութեամբ, նոյնութեամբ վաւերացուեցան նաեւ յարակից մարմիններու նիւթական հաշուետուութիւնները:

9- Հաշուէքննիչ յանձնախումբի տեղեկագիրը ներկայացուց Պրն. Լեւոն Եազըմեան, որուն մէջ եղած էին կարգ մը օգտակար թելադրութիւններ, եւ ապա յանձնեց դիւանին: Ժողովը միաձայնութեամբ վաւերացուց հաշուէքննիչ յանձնախումբի տեղեկագիրը:

10- Յանուկն Ընտրողական Յանձնախումբի Պրն.Թագևոր Յոբեան յամարոտ կենսագրութիւնները տուաւ թեկնածուներու որոնք տրամադրութիւն յայտնած էին մասնակցելու Եկեղեցւոյ Ժխական Խորհուրդին, հաշուեքննիչ եւ ընտրողական յանձնախումբերուն:

11- Ընտրողական յանձնախումբի տեղեկագրութիւնը կարդացուելէն վերջ, Ժխական Խորհուրդի թեկնածուներէն Պրն.Արմէն Քիւրքմեան խնդրեց դիւանէն ջնջել իր թեկնածութիւնը տալով ստորեւ յիշուած իր հրաժարման պատճառաբանութիւնը.-

“Ժխական Խորհուրդի թեկնածուներուն մէջ յարգելի պարոնի մը հետ, Ս.Յրրորդ. Եկեղեցւոյ հարցերու առնթէր գաղափարի հիմնական տարբերութիւններ ունինք. այսօր ժողովականներու տրամադրութենէն կը հասկնամ թէ ժողովականները երկընտրանքի մը առջեւ չգտնուելու համար թէ իրեն եւ թէ ինծի ի նպաստ պիտի քուէարկէն, որուն արդիւնք մեր տարակարծութիւնները Ժխական Խորհուրդի մէջ մէջտեղ կրնայ ելլել, որոնք խմբաւորումներու պատճառ ըլլալ եւ նաեւ Ժխական Խորհուրդի աշխատանքները կրնայ անելի տանիլ, այս բաները ինծի համար փաղձալի չեն այս պատճառաւ Ս.Յրրորդ. Եկեղեցւոյ ի շահ թեկնածութենէ կը հրաժարիմ: Հրաժարականը ընդունուեցաւ:

Նախքան ընտրութիւնը սկսիլը, Պրն.Անդրէաս Գալայմեան առաջարկեց հետեւեալը ‘ ‘ Ժխական Խորհուրդի բոլոր թեկնածուները թող ժողովիս իրենց գաղափարները յայտնեն հետեւեալ հարցերու շուրջ:

Ա.-Գանատայի մէջ Թեմի մը հիմնադրութեան մասին. Բ.- Հ.Բ.Ը.Միութեան աջակցութեամբ կեդրոնի մը շինութեան մասին. Գ.- Ամենօրեայ դպրոցի մը անհրաժեշտութեան մասին. ’ ’

Պրն.Արթո Գաւուք առաջարկեց Object Consideration Motion մը որուն կիրարկման համար անհրաժեշտ էր ունենալ ներկայ ժողովականներուն երկու երրորդի դրական համատուութիւնը: Յետ ձեռամբարձ քուէարկութեան վերոյիշեալ առաջարկը մերժուեցաւ 42ի դէմ 27 քուէով:

Պրն.Անդրէաս Գալայմեան ~~_____~~ ետ առաւ իր բերած առաջարկը, սակայն Պրն. Ժիրայր Հանրմեան այս անգամ ինքը որդեգրեց սոյն առաջարկը եւ կրկին ժողովին ներկայացուց զայն, ըայց դիւանի տեսնապետը որոշեց Պրն.Գալայմեանի առաջարկը վիճաբանութեան ենթարկել, որովհետեւ երկրորդուած առաջարկ մը առանց քուէարկութեան ետ չէր կրնար առնուիլ. երկարատեւ վիճաբանութիւններէ թէր ու դէմ կարծիքի փոխանակութիւններէ վերջ, քուէարկութիւնը կատարուեցաւ մասնակցող անդամներու անուանացանկի վրայէն. արդիւնքը եղաւ 77 դէմ 51 ի նպաստ եւ 4 ձեռնպահ:

Առաջարկը մերժուեցաւ:
Ապա ձեռնարկուեցաւ գաղտնի քուէարկութեան յատուկ քուէաթուղթերու վրայ:

Քուէարկութեան արդիւնքները եղան հետեւեալ ձեւով.-

ԺԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նորընտիր ծխական Խորհուրդի ամբողջացուցիչ անդամները քուէներու առաւելութեամբ հետեւեալ առաջին չորս անուներն էն :-

- 1.- Թորիքեան Ժիրայր 111 Քուէ
- 2.- Մամուրեան Մանաթ Բ. 102 Քուէ
- 3.- Խոճաճեան Պարգեւ 88 Քուէ
- 4.- Շիշմանեան Հրաչ 79 Քուէ
- 5.- Թոսուէնեան Նուկար 44 Քուէ

*Թայքայ անուանու է
պարտաւոր թու է թիւ 121?*

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔ

- 1.- Երէցեան Ժիրայր 101 Քուէ
- 2.- Զապուէնեան Թորգոմ 100 Քուէ
- 3.- Սէլեան Հայկ 98 Քուէ
- 4.- Սուէին Հրանդ 95 Քուէ
- 5.- Պալթեան Ալեքսան 88 Քուէ
- 6.- Գուլյուսմեան Սարգիս 70 Քուէ
- 7.- Պահուտեան Մուրատ 14 Քուէ

Նորընտիր անդամները քուէներու առաւելութեամբ վերոյիշեալ առաջին հինգ անուներն են:

ՀԱՇՈՒԻԵՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔ

Պրն. Մարտիկ Հէքիմեան առաջարկուեցաւ իբր 4-րդ թեկնածու, յետ երկրորդութեան նկատի առնուեցաւ:

- 1.- Եազըմեան Լեւոն 104 Քուէ
- 2.- Գուլյուսմեան Յովհաննէս 90 Քուէ
- 3.- Սէմէրմեան Ստեփան 78 Քուէ
- 4.- Հէքիմեան Մարտիկ 45 Քուէ

Նորընտիր անդամները քուէներու առաւելութեամբ վերոյիշեալ առաջին երեք անուներն են:

12.- ՆՈՐ ՀԱՐՑԵՐ

1.- Պրն. Գեղամ Մարգարեան խօսք առնելով առաջարկեց թէ Ողբ. Փերուզ Պապեանի եկեղեցւոյ կտակած տունը եթէ փոխանցուի եկեղեցիին եւ եկեղեցին զբաղիւի ծախելու հարցով, կը կարծեմ թէ աւելի նպաստաւոր պայմաններով կարելի է ծախել:

Պրն. Մինաս Սէլեան պատասխանեց ըսելով թէ, արդէն խնամակալ մարմինը այս հարցով մօտէն կ'զբաղուի եւ ըստ կտակի, անմիջապէս որ կալուածը ծախուի գումարը պիտի

փոխանցուի Ա.Երրորդութիւն եկեղեցւոյս.եթէ ուզենք մերնախածոնութեամբ կատարել այս գործը,ստիպուած պիտի ըլլանք մեծ ծախսեր ընել փաստաբաններու դիմելով:

Պրն.Հայկ Սէլեան աւելցնելով ըսաւ թէ,տունը պէտք է-էբզէքիւթորները ծախէն, եւ գումարը փոխանցեն Պապեան հաստատութեան խնամակալ մարմնին: Դիւանի առնապետը դիտել տուաւ թէ,Պրն.Հ.Սէլեան կ արտայայտուի իր,Պապեան հաստատութեան խնամակալ մարմնի անդամի հանգամանքով:

Ի պատասխան այս յայտարարութեան,Պրն.Գեղամ Մարգարեան առաջարկեց յանձնախումբ մը կազմել զբաղելու համար այս հարցով,փափաք յայտնելով մնս կազմել այդ յանձնախումբին ու ստանձնելով նաեւ փաստաբանի եւ այլ ծախքերը. եւ առաջարկը ընդունուեցաւ:

2- Տօքթ.Այնաճեան,խօսք առնելով ըսաւ թէ, -նոր ծուխ մը հիմնելու փորձ եղած է եւ գաղութը իրար անցած է,կուզենք լուսաբանուիլ-:

Պրն.Առնապետը յայտնեց թէ այս հարցը ժողովի իրաւասութեան սահմանէն դուրս էր եւ պատասխանելը նախագահ Սրբզ.Հօր դատողութեան կը թողուր:

Սրբզ.հայրը նախընտրեց կարգ մը լուսաբանութիւններ տալ այս հարցին շուրջ. ապա դիւանին յանձնեց Առաջնորդ Սրբզ.Հօր 16 Դեկտ.1976 թուակիր նամակը,եւ խնդրեց ընթերցումը կատարել վերոյիշեալ նամակին, առ ի տեղեկութիւն ժողովականներուն,որուն մէջ շեշտուած էր երկրորդ ծուխի մը կազմութեան անհրաժեշտութիւնը.աւելցնելով որ,սոյն նամակին պատմէնը իր ժամանակին ուղարկուած էր նաեւ տեղւոյս ծխական Խորհուրդին:

Այս առնջութեամբ յաջորդաբար խօսք առին ծխական Խորհուրդի կողմէ Պրնք.Մինաս Սէլեան եւ Հրանդ Սուլին,նաեւ Պրնք.Պարգեւ Խոճաճեան եւ Հայկ Սէլեան պարզելով իրենց տեսակէտերը ի պատասխան Սրբզ.Հօր արտայայտութիւններուն:

3- Տօքթ.Վահէ Սվաճեան խօսք առնելով ըսաւ թէ ծխականը իրաւունք չունի միջամտելու եւ արգելք ըլլալու Առաջնորդական Փոխանորդութեան գործերուն ինչպէս նաեւ երկրորդ ծուխի մը կազմութեան խնդրին մէջ:

Պրն.Կարօ Խապայեան մերժեց ընդունիլ Տօքթ. Սվաճեանի ըրած ակնարկութիւնները եւ ըսաւ թէ ծխական Խորհուրդը երբեք չէ միջամտած Փոխանորդութեան վերաբերեալ հարցերուն:

4- Ծխական Խորհուրդի առնապետ Պրն.Մինաս Սէլեան առաջարկեց եկեղեցւոյ տարեկան տուրքը 25 Տոլարէն բարձրացնել 35 Տոլարի նկատի ունենալով եկեղեցւոյս հետզհետէ յաւելեալ ծախսերը. Պրն.Ժիրայր Հանրմեան պատասխանելով ըսաւ թէ ինք կառաջարկէ 40 Տոլարի բարձրացնել ներառեալ նՈՐ ՍԵՐՈՒՆԴ ամսաթերթի բաժանորդագրութիւնը:

Սոյն առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ: -----

Թեւադրութիւններ

Նդան հետեւեալ թեւադրութիւնները.-

Ա.- Օժանդակել Պրն.Գանձապահին, որպէսզի խնամեալ հաշուէտուութիւն մը ներկայացնելու համար ապագային:

Բ.- Յառաջիկայ Անդամական Ընդհանուր ժողովին, մասնաւոր կրճկանշաններ պատրաստել տրատու անդամներու համար, զանազանութիւն համար ոչ անդամներէն:

Գ.- Կազմել անդամարշաւի յանձնախումբ մը:

Դ.- Պրն.Վարդան Վարդանեան դիւանին յանձնեց գրաւոր նօթ մը, ինչ կը վերաբերի հարսնիքի եւ այլ խորհրդակատարութիւններու համար, վճարելի սակերու ցանկ մը առ ի տեղեկութիւն:

12- Ըստ կարգի եղան նաեւ գնահատական արտայայտութիւններ, Տիկնանց Միութեան, Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ վարժարաններուն եւ Տարեց Քաղաքացիներու Միութեան տարած օգտաշատ աշխատանքներուն համար:

13 Սպառած ըլլալով օրակարգի բոլոր հարցերը, յանուն օրուայ դիւանի Ատենապետ՝ Պրն.Կարօ Գավուքեան շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, իրենց օրինապահութեան եւ համբերութեան ոգիին համար:

Սրբազան հօր պահպանիչով ու Տէրունական աղօթքի յոտնկայս երգեցողութեամբ ժողովը փակուեցաւ կէս զիշերին:

Ի Դիմաց

Ս.Երրորդ.Հայց.Նկեղեցւոյ

Տարեկան ծխական ժողովի

Դիւանի

Ատենապետ՝

Գարօ Գավուքեան
Կարօ Գավուքեան

Նախագահ՝

Արիս Եպիսկ.Շիրվանեան
Արիս Եպիսկ.Շիրվանեան

Ատենադպիրներ՝

Թորգոմ Զապունեան

Թորգոմ Զապունեան

Մատթ Բ.Մամուրեան

Մատթ Բ.Մամուրեան

Փետր.13 1978